

ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆ,  
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Հ/Հ	Գործառույթը	Ժամկետը
1.	Նախնական գնահատման ներկայացվող փաթեթների ընդունում	Մրցույթի մասին հայտարարություն տալու օրվանից հաշված՝ 30 (երեսուն) օրվա ընթացքում
2.	Նախնական գնահատման ներկայացված Հայտերի ուսումնասիրում Կինոկենտրոնի կողմից, դիտարկման և գնահատման ենթակա Հայտերի ցանկերի հրապարակում, նախնական գնահատման ենթակա Հայտերի տրամադրում փորձագետներին	Հայտերի ներկայացման վերջնաժամկետի հաջորդ օրվանից հաշված՝ առավելագույնը 7 (յոթ) օրվա ընթացքում
3.	Նախնական գնահատում, վերջնական գնահատման փուլ անցնող Հայտերի ընտրություն փորձագետների կողմից	Գնահատման ենթակա Հայտերի ցանկի հրապարակման հաջորդ օրվանից հաշված՝ առավելագույնը 30 (երեսուն) օրվա ընթացքում
4.	Վերջնական գնահատման փուլ անցած Հայտերի ցանկերի հրապարակում	Նախնական գնահատման վերջնաժամկետի հաջորդ օրվանից հաշված՝ առավելագույնը 5 (հինգ) օրվա ընթացքում
5.	Վերջնական գնահատման ներկայացված Հայտերի ուսումնասիրում Կինոկենտրոնի տնօրենի և լիազորված պետական մասնագետի կողմից, փորձագետների հետ համատեղ հանդիպում-գրույցների անցկացում՝ պրոդյուսերների և ռեժիսորների հետ	Վերջնական գնահատման փուլ անցած Հայտերի ցանկերի հրապարակման հաջորդ օրվանից հաշված՝ առավելագույնը 10 (տասը) օրվա ընթացքում
6.	Նախագծերի վերջնական գնահատում	Հանդիպում-գրույցների անցկացման

	փորձագետների կողմից	վերջնաժամկետի հաջորդ օրվանից հաշված՝ առավելագույնը 5 (հինգ) օրվա ընթացքում
7.	Մրցույթի արդյունքների ամփոփում, Նախագծերի հաստատման փուլ անցած նախագծերին ֆինանսավորում տրամադրելու հարցի քննարկում, ֆինանսավորման հաստատված նախագծերի ընտրություն	Հայտերի վերջնական գնահատման վերջնաժամկետի հաջորդ օրվանից հաշված՝ առավելագույնը 7 (յոթ) օրվա ընթացքում
8.	Ընտրված Հայտերի ցանկերի հրապարակում Կինոկենտրոնի կայքում՝ ֆինանսավորման չափի մասին տեղեկությամբ	Հայտերի հաստատման փուլի ժամկետը լրանալու հաջորդ օրվանից հաշված՝ առավելագույնը 5 (հինգ) օրվա ընթացքում
9.	Պայմանագրերի կնքում ֆինանսավորման հաստատված Հայտերի Հայտատուների հետ	Լիազորված պետական մարմնի և Կինոկենտրոնի միջև պայմանագրի կնքման հաջորդ օրվանից հաշված՝ առավելագույնը 20 (քսան) օրվա ընթացքում

